

**ՎՐԱՍԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ**

**ԻՐԱԿԼԻ ԴԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՆԻԿՈՒ ՓԱՆԻՆՅԱՆԻ ՀԵՏ ԲՆՆԱՐԿԵՑԻՔ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱԿՏԻՎ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒՄ»**

Հոկտեմբերի 9-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին մեկօրյա աշխատանքային այցով գտնվում էր Հայաստանում: Այցի շրջանակներում, կայացավ Վրաստանի և Հայաստանի վարչապետեր Իրակլի Դարիբաշվիլու և Նիկոլ Փաշինյանի հանդիպումը:



Իր հերթին, Վրաստանի վարչապետը շնորհակալություն հայտնեց Հայաստանի վարչապետին (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

Հանդիպման մեկնարկին ողջունելով վրաց գործընկերոջը՝ Հայաստանի վարչապետը եւս մեկ անգամ ցավակցություն հայտնեց Բաթումիում տեղի ունեցած ողբերգական դեպքի կապակցությամբ եւ գորակցություն հայտնեց Վրաստանի կառավարությանը, վրաց ժողովրդին: Նիկոլ Փաշինյանը շնորհակալություն հայտնեց Իրակլի Դարիբաշվիլուն, որ չնայած այդ արտակարգ իրավիճակին, չի չեղարկել իր այցը Հայաստան:

**ՀԱՍՏԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ**

**ՎՐԱՍԱՆԻ ՆԱԽԱԳԱՅԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԸ ՇՎԵՅՑԱՐԻՎ**



Այցի շրջանակներում, Վրաստանի նախագահը հանդիպումներ ունեցավ ժնեուս տեղակալված միջազգային կազմակերպությունների գերագույն հանձնակատար Միշել Բաշելեի եւ Առողջապահության համաշխարհային կազմակերպության գլխավոր տնօրեն թեդրոս Գեբրեյեսուսի, Մտավոր սեփականության եւ աշխատանքի միջազգային կազմակերպության եւ Համաշխարհային տնտեսական ֆորումի գործադիր նախագահ, պրոֆեսոր Կլաուս Շվաբի հետ:

**Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին հոկտեմբերի 14-15-ը պաշտոնական այցով գտնվում էր Շվեյցարիայի Համադաշնությունում: Սա Վրաստանի առաջին բարձր մակարդակի այցն է Շվեյցարիա:**

Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին հոկտեմբերի 14-15-ը պաշտոնական այցով գտնվում էր Շվեյցարիայի Համադաշնությունում: Սա Վրաստանի առաջին բարձր մակարդակի այցն է Շվեյցարիա:

**«ՎՐԱՍԱՆԸ» 100 ՏԱՐԵԿԱՆ Է**

**ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐ ԻՄ «ՎՐԱՍԱՆ»** **ՇՆՈՐՀԱՎՈՐ 100-ԱՄՅԱԿՂ, ՀԱՅՈՑ ՄՏԻՓ ՓԱՐՈՍ**



ՎԼԱՏԻՍԼԱՎ ԱՍՏՆՈՎ

Մեր «Վրաստանը» 100 տարեկան է: Նման արտակարգ իրադարձություն, երբ ոչ պետական լեզվով լույս տեսնող թերթը նշում է ի գործունեության մեկօրյա հոբելյանը, կարող էր պատահել միայն մեր բազմազգ, բազմակրոն, հանդուրժողական, փոխադարձ հարգանքի, փոխօգնության դարավոր փորձ ունեցող Վրաստանում:

Անձամբ ինձ «Վրաստանի» մասին հիշատակումը վերադարձնում է մանկական տարիները, երբ մայրս՝ նորանկախ Հայաստանի զինված ուժերի կազմավորողներից մեկի, մեր տարածաշրջանում միակ գեներալ-գնդապետ Գուրգեն Դալիբալթայանի քույր Արծվիկ Դալիբալթայանը, այն ժամանակվա «Սովետական Վրաստան» թերթի ակտիվ բաժանորդագրվողն ու հավատարիմ ընթերցողը, հորս՝ Մարկոս Ալեխանյանի հետ կիսավրեժերեն-կիսահայերեն կիսվում էր ընթերցած նյութից ստացած տպավորությունները:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

«Վրաստան»-ը մեր խոսում է հայերեն: Հայը, վրացին, մաեւ այլք... հին ծանոթներ են ու լավ գիտեն Մարդ-մարդկությունն ու հարգանքը... Թող անվերջ հնչի ձայնը շնորհավորանքի ու հարգանքի, թող բարեմաղթանքներ հասցեագրվեն քո հավերժող էջերին: Անցյալ, ներկա եւ ապագա միտք ու հոգի ուղեկցի սերունդներին դեպ լուսաշող ապագա՝ մաեւ ներարկած քո տեսակով...

Մանկությունից մեզ համար երջանկություն է պարգևել «Ծիծեռնակ», «Պիոներ կանչ», «Ավանգարդ», «Սովետական դպրոց», «Փարոս», «Հայաստանի աշխատավորուհի», «Գրական թերթ», «Եկրան», «Գիտությունն ու տեխնիկա», «Առողջապահություն», «Ոգնի» եւ այլ թերթեր ու ամսագրեր, բայց երկարակեցությունը վերագրում են «Վրաստան»-ին, որ բազմաթեմա հողվածներով փրկարար նավ է հիշեցնում վիրահայերիս:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)



ԶԻՆԱՐ ԵՐԱՆՈՍՅԱՆ

**ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ԴԵՊԵ**

**ԲԱԹՈՒՄԻՈՒՄ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ ՓԼՈՒԶՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԿԱ 9 ՉՈՀ, ՄԵԿ ՎԻՐԱՎՈՐ**

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-ԻՆ ՎՐԱՍԱՆՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԷՐ ՍԳՈ ՕՐ

Հոկտեմբերի 8-ին, ժամը 12-ի սահմաններում, փլուզվեց Բաթումիի՝ Մայիսի 26-ում բնակելի շենքերի մի հատվածը: Փլուզման արդյունքում զոհվել է 9 մարդ, այդ թվում՝ 4 երեխա: Փլատակներից դուրս են բերել մեկ վիրավոր, ում վիճակը ծանր է:

Ներքին գործերի նախարարությունը շենքի փլուզման գործով հետաքննության շրջանակներում ձերբակալել է երեք մարդու: Դատախազությունը նրանց մեղադրանք է առաջարկել շինարարական աշխատանքների ժամանակ անվտանգության կանոնները (Շարունակությունը՝ 3-րդ էջում)



**ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-ԻՆ՝ ՍՎԵՏԻՑԻՏԻՈՎԼՈՐԱՎ**

**ՎՐԱՍԱՆԸ ՆՇԵՑ ՄՑԽԵԹՈՐԲԱ-ՍՎԵՏԻՑԻՏԻՈՎԼՈՐԱՎ**

Հոկտեմբերի 14-ին Վրաց Ուղղափառ եկեղեցին նշեց Սցիստերա-Սվետիցիտովորայի տոնը:



Սվետիցիտովորան նշվում է տարին երկու անգամ՝ հոկտեմբերի 14-ին եւ հուլիսի 13-ին: Հոկտեմբերի 14-ին եկեղեցին նշում է Քրիստոսի պատմունամը, իսկ հուլիսի 13-ին՝ Քրիստոսի բոլոր առաքյալներին: Տոնի առթիվ Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին եղավ Սցիստերայի Սվետիցիտովելի տաճարում, ներկա գտնվեց տոնի առթիվ մատուցած պատարագին: Սվետիցիտովորայի առթիվ շնորհավորելով երկրի բնակչությանը՝ վարչապետը նշեց, որ Սվետիցիտովելին միշտ եղել է եւ կլինի վրացիների համար հավերժության, միասնության եւ ուժի խորհրդանիշ: Սենք այսօր էլ շատ փորձությունների միջով ենք անցնում, բայց Տիրոջ հավատով եւ օգնությամբ մենք կհաղթահարենք բոլոր փորձությունները, եւ երկիրը կգնա խաղաղության: Մեր սիրելի հասարակություն, այսօր երկրին պետք է ավելի շատ միասնություն, ավելի շատ սեր, ավելի շատ խաղաղություն: Փառք Աստծո, վերջերս ամեն ինչ լավ է ընթանում, եւ մենք հավատում ենք, որ մենք ունենք խորը հավատ եւ հույս ապագայի նկատմամբ: Հուսանք, որ Վրաստանը կմիավորվի, մեր ազգը կմիավորվի, եւ մեր երկիրը կհաղթի: Աստված օրհնի մեր երկիրը,- ասաց Իրակլի Դարիբաշվիլին:

**COVID - 19**

**ՊԱՏՎԱՍՏԱՆ ՏԵՄՊԵՐԸ ՆՎԱԶՈՒՄ ԵՆ, ԱՃՈՒՄ Է ՎԱՐԱԿԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՕՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԸ**

Վրաստանի Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի տվյալներով, COVID-19-ի դեմ հոկտեմբերի սկզբից օրական պատվաստումների ցուցանիշը նվազել է, այն չի հասնում 10 000-ի, մինչդեռ Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնը եւ առողջապահության նախարարությունը անհրաժեշտ են համարել օրական մինչեւ 30 000 պատվաստում:



Վրաստանում պատվաստման գործընթացը սկսվել է մարտի 15-ին: Մինչ օրս կատարվել է 1 874 845 պատվաստում: Առկա մեկ դեղաչափով պատվաստվել է՝ 1 000 785 մարդ

կամ չափահաս բնակչության 35,2 տոկոսը: Լիովին պատվաստվել է 874 060 մարդ կամ չափահաս բնակչության 30,6 տոկոսը: (Շարունակությունը՝ 6-րդ էջում)





